



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Учебник Физик

Лихоедов

491.99-8
к-82.

1909

04 MAY 2010

CL 333 309

ՅԱՀՅԱ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

(Պատկերներով և քերականության վարժութիւններով պատճ
աշխատութիւնների համար)

ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ԱՆ Ք Ս Ա Ն Գ Ր Ա Գ Ո Ւ
Առաջ Առաջնանի և Առաջնանի

1902

491.99-8
4 - 82

120 FEB 2013

120 FEB 2013

120
APR.
3-2679a

3-2679a

491.99-8

ՅԱՎԵՆԻ ԱՐԵՎԱՆԻ

Ա-82

Ձեզ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

(Պատկերներով եւ քերականական վարժութիւններով գրատը
աշխատութիւնների համար)

ԳՐԱՀԱՆՈՒՅԹ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԽՎ. № 38363

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՂ

Տպարան Սամոյեանի եւ Ստեփանեանի

1902

Дозволено цензурою. 13-го декабря 1902 года, гор. Тифлисъ.



40719-63

1987



ՄԱՅՐԵՆԻ ՀԵԶՈՒ

ԵՐԿՐՈՒԹ ՏԱՐԻ

1. ԺՈՅՆ ԱՇԱԿԵՐԾՈՒԹՅՈՒՆ

«Այսօր չեմ ուզում դասի վնալ. լաւ է՝ վնամ
խաղալու. — վճռեց մի փոքրիկ մանուկ և վազեց
պէտի դաշտ:

Բայց շուտով նա մենակ ձանձրացաւ։ Զորս
կողմը նայեց և տեսաւ, որ մեղուն թռչկոտում է
ծաղկից ծաղկի։

— Մեղմակ, մեղմակ, — կանչեց մանուկը. — արի, մի քիչ լսադանք:

— 2Ե, — պատասխանեց մեզուն. — ևս քեզ նման ծովլ չեմ, որ սառծս թողած, խաղին սկսեմ. խաղա մենակ:

Դրանից յետոյ մահուելլը ահօսւ մի վարբիկ թռչուն, որ կտուցով
խռո էր կրօսմ իւր բռնիք:

— Սիրանի թռչնակ, — տաց նրանի երեխան. — մի քիչ շսապահը:

— Ե՞նչ ես տառմ, ծնյլ տպայ, — բարիկացաւ թռչնակը. — ես ժամանակ ունիմ խաղալու. ես դեռ պէտք է մժեղիներ սրամ՝ ձագերիս կերակրեմ, բուրդ փետուր հաւաքիմ՝ բննոս վագիկացնեմ:

Մանուկը մտածմաւրի մէջ լնկաւ։ Մտածեց, մտածեց և վա-
զեց դպրոց։

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆՈՒԿԻ

2. ՏԻՄՈՒԻՐ ԵՐԵԽԱՎՅ

Երբ՝ որ ծագեցաւ պալձառ արեգակ,
Աքլար, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,
Չի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով
Գնացին իրանց գործին շտապով:

Միայն ծով տղան չգնաց գոլրոց,
Գիրքը շպրտեց ու փախաւ փողոց.
Երեկուն ամենք լետ գարձան ուրախ,
Միայն տղան էր տրտում, գլխակախ:



3. ԶԱՆԱՄՄԻՐ ՄԱՆՈՒԿԻՐ

Զանասէր մանուկը լուսամուտի առաջ նստած իւր դասերն էր սովորում, իսկ փայլուն արել նրան դուրս էր հրաւիրում, ասելով.

— Սիրուն երեխայ, բաւական չէ կարդաս, դուրս արի, մի քիշ էլ խազա:

— Ոչ, պայծառ արի, ես գեռ չեմ կարող խազալ. պէտք է դասերս պատրաստեմ:

Մանուկը կարգում ու զրում էր. յանկարծ մի փոքրիկ թոշնակ թրթուալով եկաւ, լուսամուտի առաջ նստեց և ծրլվրլալով ասաց.

— Սիրուն երեխայ, հերիք է, որքան զրեցիր. դուրս արի, խազա, ուրախացիր:

— Ոչ, սիրուն թոշնակ, — պատասխանեց մանուկը. — ես գեռ չեմ կարող խազալ. պէտք է դասերս լսւ պատրաստեմ:

Մանուկը շարունակում էր գրել ու կարդալ, իսկ պարտէզի միջ կարմիր կեռասը կարծես ասում էր նրան.

— Սիրուն մանկիկ, բաւական չէ աշխատես. դուրս արի, հասած պտուղներս կեր, կշտացիր:

Իսկ մանուկը մտածում է. «Ի՞նչ ախսրժակով կեռաս ուտեմ, քանի որ դասերս գեռ չեմ սովորել»:

Մանուկը գործը վերջացրեց, զրբերը հաւաքեց, ուրախ - ուրախ դուրս վաղեց և համարձակ կանչեց.

— Ան ով էր ինձ հրաւիրում. եկէք, ես պատրաստ եմ:

Այժմ արել նրա համար աւելի պայծառ էր փայլում, թոշնակն աւելի քաղցր էր երգում, իսկ կեռասը նրան անշափ համեղ էր թուում:

Ինչու:

4. Հ Ռ Ա Խ Է Բ

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ,

Արեն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ.

Խելօք մանուկներ, շուտ հագնուեցէք,

Շուտով դասատուն դուք հաւաքուեցէք:

Մարդ և անասուն, գագան և թռչուն,

Ամենքն էլ իրանց գործին են գնում.

Մըջիւնը բերնով կերակուր տանում,

Մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Գաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարուած,

Մարգագետինը կանաչ հագնուած.

Անտառը ձմեռուալ քնից արթնացած,

Խւր տերեւները շարժում է կամաց:

Զինորսներն իրանց ուսկանն են քաշում,

Հնձողներն իրանց մանգաղը շարժում.

Դուք էլ, մանուկներ, ձեր գըքերն առէք.

Աստուած ծուլութիւն չի սիրում երբէք:

ԳՐԱԿԱՆ ՎՃՐԹՈՒԹԻՒՆԵՐ

1. Գրեցէք այն բոլոր առարկաների անունները, որոնք դուք տեսնում էք դասատան մէջ: Եւթանչիւր բառից յետոյ վերջակէտ գրէք: Սկիզբը և վերջակէտից յետոյ զիւտառ զրեցէք:

Օքինակ: — Սեղան: Աթոռ: Գիշք...

2. Արտադրեցէք «Ճ լոռ կ ի լ ի ա յ» ստանաւօրից բոլոր շնչառոր առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օքինակ: — Աքլար: Աղանձի: Հաւ...

3. Արտադրեցէք «Ճ ա ն ա ս է ր մ ա ն ո ւ կ լ» յօդուածից բոլոր անշունչ առարկաների անուններն իրանց սկզբնական ձևով:

Օքինակ: — Լուսամհատ: Դաս: Արեւ...

4. Գրեցէք տանձին - առանձին շնչառոր և անշունչ առարկաների անունները:

Թուչուն: Բու: Բալ: Թաշկինակ: Քար: Կառու: Զի: Բար: Թել: Կով: Գլու: Գայլ: Ծանծ: Թուղթ: Կոռնկ: Հաւ: Սեղան: Շուն: Գիշք: Բանալի: Պատուհան: Սենեակ: Դետ: Աշակերտ Աթոռ: Կեսա: Մատ: Գլուխի: Քաղաքացի:

5. ՀԱՅՐԾ ԵՒ ԱՐՅԻՔԸ

Մի մարդ երկու սրդի ունիք — մեծը տասներկու տարեկան էր, իսկ փարբը՝ տասը: Մի անվամ հարիսններն ասուցին, թէ նրա սրդիքը ծիծավել են մի ովառաւ կնոջ վրայ: Հայրը խիստ յանդիմանեց նրանց և երեխանները խոստացան ուզգուել: Բայց մի քանի ժամանակից յետոյ մանուկները մոռացան իրանց խոստաւմը և, մի ծերսնու պատահելով, սկսեցին ծաղրել նբան: Այս բանն էլ հօր ականջին հասաւ:

Միւս օրը հօր տօնն էր: Որդիքը եկան չերիհաւորելու և տուղջութիւն ու երկար կեանք մաղթեցին նրան:

— Զաւակին՞րս, — ասաց հայրը, — ես չեմ ցանկանում երկար ապրել. վախենում եմ, որ երբ ծերանամ, չար մանուկները ծիծավեն ինձ վրայ:

Երեխանները հասկացան, թէ ինչ է ուզում առել հայրը և սաստիկ ամօթից շղիտէին, ինչ անեն: Այն օրից նրանք այլին չէին ծիծաղում ծերունիների վրայ:

6. ԳԻՒՀԻ ԳՐ ԳՐԱԳԻԾԸ

Իւր որդուց մայթը
Նամակ ստացաւ,
Կարօտած սիրտը
Վեր ու վար եղաւ:

Որդին հեռու էր,
Օտար քաղաքում,
Ծառայում մի տան,
Գոլբոցում սովորում:

Նայում է թղթին,
Սիրուն նշաններ,
Բայց այդ գըրերի
Միտքը չգիտէր:

Տղան ինչ է գրել,
Պէտք է իմանար,
Բայց նրա տանն էլ
Կարդացող չկար:

Ոռւրս եկաւ փողոց,
Մի քարի նստեց,
Գիւղի տէրտէրի
Որդուն հանդիպեց:

Եւ նրան կանչեց,
— Տէրտէրի տղայ,
«Մօտս եկ, ապրես,
«Այս թուղթը կարդա»:

7. ԵՂԲԱՋՐ ԵՐ ԵՐԸ

Գիւղացին հօթը որդի ունիք: Հայրը միշտ պատուիրում էր նրանց, որ հաշտ ապրեն միմեանց հետ, բայց եղբայրները չէին կատարում հօր պատուէրը և իրանց օրը կոսուով էին անցկացնում:

Մի անգամ էլ հայրը հրամայեց մի ցախաւել բերել և ասաց սրդոցը.
— Զեղանից ով որ կոտորէ այս ցախաւելը, հարիւր մանէթ կլստանայ ինձանից:

Եղբայրները շատ չարշարուեցին, բայց շկարովացան կոտորել:
Այն ժամանակ հայրը քանդեց ցախաւելի կապերը և բոլոր ճիպուտները ջոկ-ջոկ կոտրածեց:

— Տեսէր, — ասաց նա որդոցը. — թող այս ցախաւելը ձեղ օրինակ լինի. եթէ կուք հաշտ ապրէք, ձեղ ոչ ոք չի կարսկանալ յաղթել.

իսկ եթէ իրար հետ կրուէք և միմեանց հակառակ լինիք, ձեզ ամեն
մարդ էլ հեշտութեամբ ջոկ-ջոկ կը ընչացնէ:

8. ԱՐԲԻ ՊԱՀԱՆՁՔ

Որբ եմ անտուն, անպաշտպան,
Տուէք խնդրեմ ապաստան,
Տուէք սնունդ և ուսում,
Ես մարդ գառնալ եմ ուղում:

Չեմ ցանկանում չըջել զուր,
Սնդործ ընկնել դանէ-դուռ,
Չը մուրբալ ու ապրել,
Ողորմութեան սովորել:

Առէք ձեզ մօտ որդեգիր,
Տուէք ձեռքս արհեստ, զիր,
Լինեմ խելօք ու ազնիւ,
Աւելեմ միշտ սէր, պատիւ:

ԳՐԱԿԱՐԱՆ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

5. Արտագրեցք հետեալ բառերը եղակի և յոդնակի թուով:

Հաւ — հաւեր: Օր — օրեր: Գործ — զործ...: Դաշտ — դաշտ...:
Քար — քար...: Գոյն — զոյն...: Քոյր — բոյր...: Սար — սար...: Բազ —
բազ...: Խոտ — խոտ...: Ցանց — ցանց...: Խաչ — խաչ...: Գիտ —
գիտ...: Ամպ — ամպ...: Գուղղ — զնիւր: Թուղթ — ...: Ցուն — ...:
Գիրք — ...: Միրք — ...: Մանուկ — մանուկներ: Թոշոն — թոշոն...:
Բերան — բերան...: Մեղու — մեղու...: Ժաղիկ — ժաղիկ...:

6. Արտագրեցք «չ այլ և և ո բ դ ի ք ը» յօդուածից բոլոր դոյական
անուններն իրանց սկզբնական ձևով:

Օ բ ն ա կ: — Հայր: Ռոդի: Մարդ:

7. Արտագրեցք հետեալ նախապատրիւնները և փակագծերի մէջ
հարցեր տեելացրէք: Հարցերի տակ զիծ քաշեցէք:

Կովը (ո՞վ) բառաշում՝ է: Արեւը (ի՞նչը) ծագեց: Աշակերտը
(....) խաղում՝ է: Անձրեւ (....) է գալիս: Մազը (....) լողում՝ է:
Արծիւը (....) թռչոն՝ է: Սոխակը (....) երգում՝ է: Օձը (....)
սողուն՝ է: ծառը (....) ծաղկեց:

9. Վ Ա Ճ Բ Ն Կ Ե Ր

Հայրը տեսաւ, որ իւր սրգին վատ ընկերների հետ է ման զալիս:
— Զաւակս, — ասաց նրան: — Հեռու կաց զբանցից. զրանք քեղ
կը փշացնեն:

— Ոչ, հայրին, — պատասխանեց մանուկը. — ճիշտ է, իմ ընկեր-
ները վատ են, բայց ես կաշխատեմ նրանց ուղղել:

Հայրը վեր տռաւ մի կողավ, որտեղ միքանի փշացած խնձորներ
կային, և նրանց մէջ մի զեղեցիկ կարմիր խնձոր և մի մաքուր քար
զնելով, ասաց սրգուն:

— Թոնդ սրանք մնան այսակ, տեսնենք՝ ինչ կը լինի:
Երեք օրից յետոյ հայրը որպուն բիրեց կողովի մօտ: Նայեցին ան
ինչ տեսան: Գեղեցիկ, կարմիր խնձորն էլ արգին սկսել էր նեխուել,
փշանալ, իսկ քարն, իհարկէ, ամենին չէր փոխուել:

— Տեսնաւմ ես, — ասաց հայրը սրգուն. — Եթէ դու էլ այս քարի
նման պիմունք ես, ես քեզ չեմ արգելիլ վատ մարդկանց հետ ընկնել.
Իսկ եթէ թոյլ ես, ինչպէս այս խնձորը, այն ժամանակ ինրդ էլ
կը փշանաս վատ ընկերների մէջ:

10. Գ Ի Ր

Կարդա՛, այ իմ խելօք մանուկ,
Կարդա՛, գընք դու ամեն օր.
Գիր կարդողի խելքն է կտրուկ,
Միտքը — պալծառ ու լուսաւոր:

Գիր կարգալով՝ դու աշխարհիս
Կըճանաչես չարն ու բարին.
Ով է խնդում, ով է լալիս,
Ով է զրկում խեղճ թշուառին:

Դու կիմանաս, ինչու մարդիկ
Պէտք է ապրեն իրար համար.
Ինչ է մարդկանց ցաւն ու կարիք,
Ինչ է լուսը, ինչ է խաւար:

Կարգա՛, դու իմ խելօք մանուկ,
Կարգա՛, գըլիր դու ամեն օր,
Գիր կարդողի խելքն է կարուկ,
Միտքը — պայծառ ու լուսաւոր:

11. ՈՐԴԻՇԱԿԱՆ ՍԷՐ

Մի երեխայ, փափոցի միջով լաղելիս, ընկաւ կառի տակ.
անիմն անցաւ նրա ստի վրայով և ջարդեց: Խեղճ երեխային վերցրին
և տուն տարան: Նրա մայրը տանը հիւանդ պարկած էր և հինց որ
լսեց որդու լացուկոծը, վախից ուշաթափուեց:

Երեխան իսկոյն կարեց ձայնը և մինչդեռ ուզում ու կապում
էին ստը, նա ամենին ձայն շնորհեց:

— Միթէ դու ցաւ չես զգում, — հարցուց նրան վերջապէս բժիշկը:

— Օ՛, սասաթիկ, — հառաշեց մանուկը. — բայց ես չեմ ուզում, որ
մայրիկս իմանայ այդ. նա շատ կրվատնայ:

12. ՕՐՈՐՈՅԻ ԵՐՋ

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի դալ.
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Ե՛կ, աբեղաձանգ, թող արտ ու արօտ,
Օրօքէ տղիս, քնի է կարօտ.
Բայց նա լալիս է, դու, ձագուկ, մի դալ.
Իմ որդին չուզէ աբեղալ դառնալ:

Թո՞ղ դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վուվուլով տղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի դալ.
Իմ որդին չուզէ սգաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, զող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է, կաչաղակ, մի դալ.
Իմ որդին չուզէ սովորագար դառնալ:

Թո՞ղ որսդ արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կուզէ:
Բազէն որ եկաւ, որդիս լուեցաւ,
Մազմի երգերի ձայնով քնեցաւ:



ԴՐԵԽԱՐ ՎԵՐՓՈՒԹԻՒՆԵՐ

8. Արտազրեցէք «Վատ ընկելը» յօդուածից թէ չնշառը և թէ ան-
շունչ առարկաների անունները եղակի և յոդնակի թուսվ:

Օ սին ակ: — Եղակի թ. — Ընկեր: Հայր: Որդի:

Յոզենակի թ. — Ընկերներ: Հայրեր: Որդիներ:

9. Գրեցէք ձեզանից միքանի վորըիկ նախաղասութիւններ եղակի թուով:
եւրաքանչիւր նախաղասութիւններ յետոյ վերջակէտ դբէք: Վերջակէտից յետոյ
զիտատառ դբեցէք:

Օ ք ի ն ա կ: — Ընկերս եկաւ: ծիտը ծըլվըլում է:

10. Արտագրեցէք միհնայնը յոդնակի թուով:

Օ ք ի ն ա կ: — Ընկերներս եկան:

11. Արտագրեցէք և հարցերին յարմար բառեր տեղայիշէք:

Մանուկը (ո՞վ) պատսասխանեց: Աստղը (ի՞նչը) փայլում է:
..... (ո՞վ) եկաւ: (ի՞նչը) ընկաւ: (ո՞վ) պովորեցնում է:
..... (ո՞վ) երգում է: (ի՞նչը) սպայծան է: (ո՞վ) վերադարձաւ:
..... (ո՞վ) կծում է: (ի՞նչը) մաքուր է:

13. Հ Ր Ա Շ Ա Լ Ի Խ Ո Թ Տ

Երկու պատին, Աննան ու Կատարինէն, քաղաք էին զնում: Նրանցից ամեն մէկը մի կողով խնձոր էր տանում: Աննան շարունակ տրանջում էր ու հառաջում, իսկ Կատարինէն ծիծագում ու կատակներ էր անում:

— Ասա, խնդրեմ, ինչն է պատճառը, որ զու այլպէս ուրախութախ ծիծագում ես. — Հարցուց վերջապէս Աննան. — չ որ քո կողովն էլ խմիս պէս ժանր է և զու էլ խնձանից ուժեղ չես:

— Ճշմարիտ ես ասում, — պատասխանեց Կատարինէն. — բայց ես իմ կողովում մի այնպիսի խոտ եմ դրել, որից ամեն բեռ թեթևանում է:

— Միթէ, այդ ինչպիսի խոտ է և սրտեղից ես ճարել, — Հարցուց Աննան զարմացած:

— Թէ որտեղից եմ ճարել, այդ ես էլ չփիտեմ, — պատասխանեց Կատարինէն. — միայն անունը կարող եմ ասել. զա կոչում է համբերութիւն, որից զու զուրկ ես, սիրելի Աննա:

Համբերութիւնը կեանք է:

14. ՊԱՊՈ ԵՒ ԹԱՐԹՆԻՔԾ

Պապը սաստիկ ծերացել էր: Նրա աշքերը լաւ չէին տեսնում, ավանջները ծանրացել էին. Նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից զիղգողում էին, այնպէս որ՝ զգալը բերանը տանելիո՛ կերակուրը կաթկըթեցնում էր:

Այս բանը զիւր չէր գալիս նրա որդուն ու հարսին: Նրանք ծերին իրանց հետ հացի չէին նատացնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հայ ուտելու:

Մի անգամ, ճաշի ժամանակ, ծերի ձեռները զողգողացին, կաւէ տմանը վայր ընկաւ և կոտրուեցաւ: Աւելի ևս բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վրայ և զրանից յետոյ փայտէ տմանով էին կերակուր տալիս նրան:

Ծերունին մի թռոնիկ ունէր: Մի օր մանուկը, յատակի վրայ նստած, տաշեղներից ինչ-որ բան էր շինում:

— Այդ ինչ ես շինում, նրդի, — հարցրեց նրան մայրը:

— Փայտէ աման եմ շինում, մայրիկ, որ երբ զու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր տամ ձեզ, — պատասխանեց մանուկը:

Հայրն ու մայրը իրար նայեցին և ամօթից կարմրեցան: Նրանք այնուհետեւ սկսեցին ծերին շատ պատուալ ոլահել:

Պատուի՛ր ծերին, որ ծերանաս: ծերանաս, ծերի պատիւը կիմանաս:

15. ՄԵԺԵՐ ԵՒ ՓԱՔԲՐԵՐ

Գարեգինը, պատուհանի առաջ կահղնած, նայում էր դէպի փողոց, որտեղ պառկած էր նրանց զամբուր — Յօղաբը և տպանում էր արեղակի տակ:

Յանկարծ Յօղաբին մօտեցաւ մի փոքրիկ քոթոթ և սկսեց սաստիկ անհանգստացնել նրան — յարձակում էր վրան, հաշում էր և կրծոտում նրա ահապին թաթերին ու գունչը:

— Սպասիր, — ասաց Գարեգինը. — Կա քեզ խրատ կըտայ:

Քոթոթը շարունակում էր իւր շարութիւնները, իսկ Բօզարն ամեննեխն չէր բարկանում նրա վրայ և տեղից չէր շարժում:

— Տեսնում ես, — ասաց հայրը Դարեփինին, — Բօզարը քեզանից բարեսիրտ է. նա իրանից վորբին չի դիպչում: Իսկ երբ քո վորբը եղբայրներն սկսեն քեզ հետ խաղալ, այն ժամանակ անշուշտ ձեր խաղը կը վերջանայ նրանով, որ գու նրանցից մէկին կամ միւսին մի զրկանք կը հասցնես:



16. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՑՈՒՆ

Ժամանակով կատուն ճօն¹ էր,
Շունն էլ գլխին գդակ չունէր.
Միայն, գիտեմ ոչ որտիանց-որտի²
Ճանկել էր մի գառան մորթի:
Եկաւ մի օր, ձմբոնամտին,
Կատուի կուշտը տարաւ մորթին.—
«Բար՝ աջողում, ուստա՞ Փիսօ,
«Գլուխս մրսեց, ի սէր Ասոյ,
«Ո՞ս էս մորթին ու ինձ համար
«Մի գդակ կարէ գլխիս լարմար:
«Կարձգ կրտամ, միամիտ մնա,
«Միայն խնդրում եմ, շատ չուշանար»:
— Աչքիս վրայ, քեռի Քուչի,

¹ ճօն — դերձակ; ² Որտիանց-որտի — որտեղից-որտեղ:

«Մի գդակ ա, խու մի քուրք չի.
«Քու թանկագին խաթեր համար
«Ուրբաթ օրը համեցէք տար.
«Փողի մասին աւելորդ ա,
«Մէր մէջ խօսալն էլ ամօթ ա.
«Ի՞նչ վենձ¹ բան ա, տօ հէր օխնած,
«Հա, հա, հա... մի գդակի վարձ...»

Ուրբաթ ծէքին քեռի Քուչին
Ուստից ծէքին², բաց բաց կուճին³,
Թափ թափ տալով ծանդըը ու մեծ
Ուստա կատուի շէմքում կանգնեց.
— Ուստէն ուր ա... փափախս ուր ա...
— Մի քիչ կացի, հրէս կերեալ:
Ուստէն եկաւ քուրքը հագին.
Շանը տեսաւ, բեխի տակին
Իրան-իրան քիչ փնթփնթաց
Ու մուշտարու վրայ թնդաց.
— Ցրտատար էլար... վահ, տնաշէն,
Զես թողնում, որ մի շունչ քաշեն.
Սհաթ⁴ խու չի, գեռ հլա նոր եմ
Ցրցամ տուել⁵, թէ որ կարեմ»:
— Թէ հէր օխնած, էտէնց⁶ տսա,
«Էդ բարկանալդ էլ ընչիս ա.
«Փող եմ տուել, շուտով կարի,
«Թէ չէ, տսա, էգուց արի...»
Սսաւ Քուչին ու նեղացած
Վերադարձաւ գլուխը բաց:

Մին էլ եկաւ, դարձեալ չկար.
Ես անգամը դիպան իրար,
էլ անպատիւ, պետոը⁷ խօսքեր,

¹ Վենձ — միծ: ² Ծէքին — վաղ, կանուխ: ³ Կուչին — զլուխը: ⁴ Սհաթ — ժամացոյց: ⁵ Ցրցամ տալ — չուր սրոկի: ⁶ Էտէնց — այդպէս: ⁷ Պետոը — անպատիւ:

Ել հին ու նոր, Ել հերն ու մէր,
Ել գող Փիսօ, Ել քաշալ շուն...
Բաննը հասաւ դիւտանբաշուն¹:
Մինչև շունը գնաց—եկաւ,
Ուստա կատուն կոտըրն ընկաւ²,
Գլուխն առաւ ու մի գիշեր
Հայտէ, կորաւ. Են գնալն էր...

Են օրուանից մինչև օրս Ել
Շունն էս բանը չի մոռացել,
Մտքումը հլա գեռ պահում ա.
Որտեղ կատուին պատահում ա,
Վրայ ա վազում, մորթուց քաշում,
Իրան մորթին ետ ա ուզում.
Իսկ սեերես կատուն յանկաց
Ետ ա գառնում ու բարկացած
Փշտացնում ա, միտամ³ նոր եմ
Ցրցամ տուել, թէ որ կարեմ:

17. ԺԻԾԵԹՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՇՆՇԴՅՈՒԹԻՐԸ



Մի անգամ ճնճղուկը կամեցաւ զոռով
տիրել ծիծեռնակի բնին և այնտեղ բնակուել:
Բնից արտաքրսուած ծիծեռնակն աղաղակ
բարձրացրեց, որի վրայ խսկոյն հաւաք-
ուեցան նրա ընկերները և ոկտեցին յետ
ու առաջ անել բնի մօտ. Նրանք մտիկ էին
տալիս ներս, աղաղակում էին, կարծես այդ-
պիսով կամինում էին թշնամուն դուրս անել
բնից. Բայց կամակոր ճնճղուկը ներս էր քաշ-
ուել բնի խորքը և դուրս զարու միտք էլ
շունէր. Վերջապէս, տեսնելով որ ոչինչ չի
օգնում, ծիծեռնակները բոլորը միասին յան-

¹ Քիւանբաշուն—զատաւորին; ² Կոտըրն ընկաւ—ոնանկացաւ; ³ Մթամ—իրն թէ;

կարծ անհետացան: Նրանք թուան-գնացին մօտիկ ճահիճը, կտուցնե-
րով մի-մի վաքրիկ կտոր ցեխ տուան և եկան, միքանի բոպէի մէջ
ծածկեցին ընի մուտքը: Այսպէս մեր յանդուկն ճնճղուկը ընի մէջ
վակուած մնաց և սովամահ եղաւ:

ԳՐԱԿԱՆ ՎԵՐՓՈԽԻԹԻՒՆՆԵՐ

12. Արտագրեցէր հետեւել գոյական անունները եղակի թուով:

Տներ: Աչքեր: Բաղադրներ: Մարդիկ: Դէզեր: Երեկոներ: Մա-
ղեր: Օղակներ: Մայրեր: Տեղեր: Աթոռներ: Եզներ: Արիծներ:
Բզէզներ: Շողմաներ: Պողեր: Լորեր: Կանայք: Զիաներ: Չուաներ:
Օքինաւ ակ: — Տներ — տուն: Աչքեր — աչք:

13. Արտագրեցէր հետեւել նախաղասութիւնները և ենթական երի
տակ զիծ քաշեցէր:

Քոթոթը խաղում է: Եղբայրս տարանում է: Կատուն ճանկուց:
Պապը ծերացիլ էր: Որդին բարկացաւ: Չուկը լողում է: Աղախինը
հառաշում էր: Հիւանդն առողջացաւ: Ամանը կոտրուեցաւ:

14. Արտագրեցէր նոյնը յոգնակի թուով:


Օքինաւ ակ: — Քոթոթները խաղում են...

18. ԺԻԾԵԹՆԱԿԻ ՑԻԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ծիծեռնակը բուն էր շինում,
Եւ շինում էր, և երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս
Առաջուան բունն էր լիշում:

Մէկ անգամ էր նա բուն շինել
Եւ շատ անգամ կտրկատել,


Բայց այս անգամ, վերագարձին,
Բունն աւերագ էր գտել:



Այժմ նորից բաւներ շինում, և այսաւաձն նպաք
Եւ շինում էր, և երգում, զայտ թիզզով մի-մի խոյ
Ամեն մի շիւղ կպցնելիս՝ պարուն միզ մըսքին ան
Առաջուան ըունն էր լիշում։ այս և զանի նախույժ

Նա լիշում էր անցած տարին
Իւր սնուցած ձագերին,
Որոնց ճամպին լափշտակեց
Սըիւնարբու թշնամին։

Բայց նա կըկին բաւն էր շինում,
Եւ շինում էր, և երգում,
Ամեն մի շիւղ կպցնելիս՝
Առաջուան ըունն էր շինում։




19. ԱՌԻՒԹՈՒՐ ԵՒ ՄՌԻՒՐ

Առիւծը քնած էր։ Մի մուկ վասեց, անցաւ նրա վրայով։ Առիւծը
զարթնեց և բանեց նրան։ Մուկն մկնեց խնդրել, որ արձակէ իրան։
— Թողինձ, — առացնա. — դրա վոխարէն եսքեղ լաւութիւն կանիմ։
Առիւծը ծիծաղեց այդ խօսքերի վրայ, բայց էլի արձակեց մկանը։

Միքանի ժամանկակից յետոյ առիւծը որսորդների ցանցի մէջ
ընկաւ։ Նա զարհուրելի կերպով մոնչում էր և քաշքում ցանցի թո-
կերը, բայց աւելի էր ինձընում նրա մէջ։ Մուկը լսեց առիւծի
մոնչնցը և նաւարեց խրանկերին նրան, որոնք եկան, իրանց սուր
առամներով կրծեցին, կտրատեցին ցանցի թուկերը և առիւծին ազա-
տեցին թակարգից։

— Յիշնմ ես, — տասց այն ժամանակ մուկն առիւծին, — որ դու
ծիծաղում էիր ինձ վրայ և չէիր կարծում, թէ ես քեզ լսութիւն
կարող եմ տնիկ։ Այժմ տեսնում ես, որ մինից էլ կարելի է լսու-
թիւն սպասել։



20. ՄՌԻՒՐ ՈՒ ԿԱՃՈՒՐ

— Ընկել եմ ճանկդ, գէհ, ուտում ես, կեր,
«Ել ինչ ես խառնում իմ գտոք ցաւեր».
«Գիտեմ, որ իմ վերջս այսօր հասել է,
«Խեղճ ձագս բնում անտէր մնացել է»։

Ասաց մի խեղճ մուկ անիբաւ կատուին,

Որ ճանկել նրան, գլուկ էր տակին։

— Միթէ ուտելու է մենակ իմ ուզած,

Պատասխան տուեց կատուն բարկացած։

Ամեն մի ձալնդ, քաղցր ծըզծըլոցդ,

«Որ ականջս է ընկնում, ու այդ թուլանուլդ մըսքավորաց».

«Տեսնելիս սիրտս աճնպէս է ցնծում».

«Որ կարծում եմ, թէ նոր կեանք եմ ստանում»։

ԳՐԱԿԱՆ ՎԵՐԻՍՏ ՎԵՐԻԹԻՒՆՆԵՐ

15. Արտագրեցէք հետեւալ յատուկ գոյական անունները:

Աստուած: Յիսոս: Աննա: Վարդան: Վահան: Տփիփիս: Արարատ: Արագած: Արաքս: Շիրակ: Երեսան: Էջմիածին: Ոռոսաստան: Հայաստան: Փրանսիա:

16. Արտագրեցէք «Առիւծը և մուկը» յօդուածից բոլոր հասարակ գոյական անունները:

Օրինակ: — Առիւծ: Մուկ:

17. Արտագրեցէք և ենթականներ աւելացրէք:

Չե՞ն (ո՞վ) իրինջում՝ է: (ո՞վ) թռչուն է: (ո՞վ) զրում՝ է: (ի՞նչը) դառն է: (ի՞նչը) կաթկաթում՝ է: (ո՞վ) հազմուեց: (ո՞վ) վարում՝ է: (ո՞վ) նստած է: (ո՞վ) թռչում՝ է: (ի՞նչը) քանդուեց:

18. Գրեցէք ձեզանից միքանից յատուկ գոյական անուններ:

21. ՈՐՍՈՐՃՆ ՈՒ ԿԱՔԱԽԸ

Մի անկամ կաքաւը, անտառից դէպի գաշտ թռչելիս՝ պատահեց որսորդին:

— Սիրելի որսորդ, — ասաց նա. — Աստուած սիրես, ձագերիս չսպանես. նրանք այս անտառի բոլոր թռչուններից ամենասիրուններն են:

— Ջատ բարի, կաքաւիկ, — պատասխանեց որսորդը. — Եթէ այդ սիրուն ձագերդ պատահեն ինձ, ես նրանց կը լսայեմ, ձեռք չեմ տալ:

Կաքաւը հանգիստ սրտով թռաւ-զնաց իւր գործին, Բայց երեխյան տուն վերապահալիս ի՞նչ տեսնի խեղճ մայրը. Որսորդը մազալսի մէջ դրած՝ տանում է փոքրիկ կաքաւներին, նրա սիրասուն ձագուներին:

— Ա՞խ, անխիղճ որսորդ, — մորմոքած սրտով ասաց մայրը. — Հէ որ դու խոստացար խնայել ձագուներիս. ինչու խօսրդ շպահեցիր, ինչու սպանեցիր խեղճ ճուտիկներիս. Ամօթ քեզ, ստախօս մարդ:

— Բայց չէ որ դու ինձ ասացիր, թէ քո ձագերն այս անտառի ամենասիրուն թռչուններն են, այնինչ իմ սպանածները, ինչպէս դու էլ տեսնում ես, ահա այս մոխրագոյն տպեղ թռչնակներն են, — պատասխանեց որսորդը:

— Ա՞խ, — բացագանչեց որդեկարոյս մայրը. — Այթէ դու չպիտես, որ ամեն մի մօր համար ամենասիրունն ու ամենապուրեկանը իւր հարազատ գաւակն է:

22. ԹՐԻԽԹԱԿՆ ՈՒ ՍՈԽԱԿՆԸ

Մի թռւժակ տան մէջ այնքան ճըգլաց, շրկչլաց, որ տանտէրը նրան տանից դուրս անել տուեց:

Թռւժակի ինքնասիրութեանը դիպաւ այս բանը և նա սկսեց զանգատուել սոխակին, որը եկել էր նրան տեսնելու:

— Աչքիս լոյս, — ասաց թռւժակը սոխակին. — Ես լսել եմ, որ դու լաւ վարպետ ես ելաժշտութեան մէջ, ինչպեմ լսես իմ երգերը և տսես ինձ, թէ ինչ պակասութիւն կայ նրանց մէջ, որ իմ տիրոջը վիւր չեն գալիս:

— Ջատ լսե, — ասաց սոխակը. — Երգիր, տեսնեմ՝ ինչպէս իսկ երգում: Ես ուղախութեամբ կը լսեմ քեզ պէս սիրուն թռչունի երգը:

Թռւժակին սկսեց իւր բոլոր ճարտարութիւնը թափել. հաւի պէս կրկըշաց, շան պէս հաշեց, կատուի պէս մլաւեց, մի խօսքայ կրկնեց իւր բերան-արած բոլոր բառերն ու երգերը:

— Այժմ, սիրելիս, — ասաց նա սոխակին. — Ինչպեմ տսես, դու լսած կամ մի այսպիսի բան երրեիցէ:

— Սիրուն թռւժակ, — պատասխանեց սոխակը. — Դու ինձ կը ներեն, եթէ ես քեզ մի նկատողութիւն անեմ: Դու երգում ես ուրիշների ձայնով, ուրիշների երգեր ես երգում: Եթէ ունենաս քո սեպհական երգը, ել քեզ տանից դուրս չեն տնիլ:


23. ԳԵՐԻ ԹՐԻԽԹԱԿՆ

Իմ տեկինը կերակրում է

Ինձ նշերով, շաքարով,

իմ վանդակը զարգարում էմ այ զա ԱՇ քարտ —
իւր քնքշիկ ձեռներով:

Բայց գէթ մի ժամ ուրախ լինել
և չեմ կարսղ իմ կեանքում,
Երբ լիշում եմ, թէ գերի եմ
Սլո նեղ, փակուած վանդակում:



24. Զ Ի Ւ

2ին լնտանի կենդանիներից տմենապեղեցիկն է: Նրա մարմինը
ծածկուած է կարճ, կոկիկ մազերով: Պարանոցի միջայ ունի երկար
բաշ, որի մի փառնը՝ փարրիկ, ականջների միջամ իջնում է զէսի
ճակատը: 2իու ազին (պոչը) ծածկուած է երկար մազերով: 2իերը
լինում են զանգան զոյնի — ոհ, կարմիր, մոխրագոյն, սպիտակ, չալ-
բարակ, գեղեցիկ ոսների վրայ մասների տեղ կան ո՞ւ բա կն եր,
սմբակներին երկաթէ պայտեր են խփում, որ ոսները շվնասուին:

2ին շատ խելացի կենդանի է: Նա ճանաշում է իւր տիրոջը և
կատարում նրա հրամանները: Մարզս նրանից շատ օպուտներ է
ոտանում:

կաթը զոյն ըօրը Գրիշի ՈՒ ՎԵՐ ԹԻ ԹԻ ՆԵՐ նույն ուրու զոյն
19. Արտազրեցէք «Զ ի» յօդուածից բոլոր հասարակ գոյական անունները:

20. Արտազրեցէք հետեւալ հաւաք ական գոյական անունները:
Համար: Գունիկ: Անտառ: Ջոկ: Ջոլք: Երամ: Վոհմակ: Հորան:
Ամընի: Ժողովուրդ:

21. Արտազրեցէք հետեւալ նախագասութիւնները և փակագծերի մէջ
հարցելացրէք: Հարցերի տակ գիծ քաշեցէք:

Քահանան (ի՞նչ է անում) աղօթում է: Աստուած (ի՞նչպէս
է) ողօթում է: Վարդը (ի՞նչ է) ծաղիկ է: Մարզը (.....) մուա-
ծում է: Ոշխարը (.....) մայում է: Արծաթը (.....) մետաղ է:
Աշակերտը (.....) աշխատաէր է: Երկիրը (.....) կոր է: Օրը
(.....) բացուեցաւ: Կրակը (.....) հանգաւ:


25. Զ Ի Ւ Ե Խ Է Շ Բ

Մի բեռնաւորուած էշ և մի պարապ ձի միասին ճանապարհ էին
վնում: Խեղճ էշը տնիքում էր իւր ծանր բեռնի տակ:

— Ազաշում եմ քեզ, — խնդրեց նա ձիուն: — օլիմիր ինձ, բեռից
մի քիշ գուն վեր առ:

2ին ականջ չգրեց իւր ընկերոջ տղաշանքին: Ճանապարհին էշը
վայր ընկաւ և շունչը փշեց: Տէրը վեր առաւ իշի բեռը, նրա կաշին
էլ բերթեց և ձիուն բեռնեց:

— Վայ ինձ, — հառաչեց ձին: — եթէ ես օգնէի խեղճ իշին, նա
կենդանի կը մնար և իմ բեռն էլ այսրան ծանր չէր լինի:



26. Կ Ո Վ

Կովն էլ, ձիու նման, լնտանի չոր-
րոտանի կենդանի է: Նրա վլուխը լայն
է և ունի երկար պողեր: Կովը պողերով
ողաշապանուում է շներից ու զայլերից —
նրանցավ հարսւ է տալիս: Նրա ողնա-

շարը կուրս ցցուած է, կովերը փքուած, տաները կարճ, պոչը երկար՝ ծայրը վնչամագ: Խւրաբանչւր ոտի լրալ ունի մի-մի զուր կճռակներ:

Կովկասակեր կենտրանի է. բայց նա իւր կերպակութը մի անգամից չի ուտում, վերջացնում. առաջ խստը բերանն է առնում և առանց ծամելու կուլ տալիս. քիչ յետոյ կուլ տուածը նորից յետ է գալիս բերանը և այս անգամ կովկը լաւ ծամում. որո՞նում է ու դարձեալ կուլ տալիս:

Կովկ մարդուն համեղ կաթն է առլիս։ Կաթնից պատրաստում են մածուն, թան, իւղ և պանիր։

27. ԿԹԵԼ ԵՒ ՀԱՌԵԼ

— Умні, чи буде відповідь, що було погано з

Կովերն ի՞նչպէս են կթում:

— Ահա այսպէս են կթում.

Հորթը կապում մօր ծնկից,

Ծիծը խլում զաւակից,

Կովկասի լիրանց ձեռքն առնում

Ապա կողքին կըկըզուժ —

$\Phi_{L^+22}, \bar{e} L^+ d \bar{d} \dots$

$\Phi_{L'22}, L'L'd\dots$

Ահա այսպէս են կթում,

— 0^oNg Ng. Sumanjib Singh.

Հենց այսօր էլ Հառերին:

— ԱՀա ալսակս հարեցին.

Թոկր ծառից կապեղին,

Հաստ խնոցին կախեցին,

ԵՐԿՈւ օՐՈւայի Հաւաքոր

‘Երա մէջը ածեցին,

Տաքուշ հող ջուր խառնեցին գնդպասաց է և
Եւ ծալբերեց բռնելով,
ԱՅ անո՞ւ : Տարած բերին, շարժեցին՝
Թը՛րիսկ, չը՛րիսկ...
Թը՛րիսկ, չը՛րիսկ...
Ա.Հա ալսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին:

28. *bθθh bθψ*

Մարդու մէկը մի կով ունէր: Նա օրական մի կճուճ կաթն էր տալիս իւր տիրոջը: Մի անգամ այդ մարդու մօտ հիւրեր պէտք է զային. նրան շատ կաթն էր հարկաւոր. այդ պատճառով նա տասն օր չկթեց իւր կովը, կարծելով, թէ տասներորդ օրը կովը տասը կճուճ կաթ միանգամից կլտայ: Բայց որքան զարմացաւ խեղճ մարդը, երբ վերջին օրը կովն առաջուտնից քիչ կաթ տուեց, որովհետեւ երկար ժամանակ չկթելուց նրա կաթը ցամաքել էր:

ԳՐԱԴԱՐԱՆ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

22. Արտադրեցէք հետեւեալ նախազառութիւնները և սառը ոգեալները լի տակ զիծ քաշեցէք:

Կովը որո՛՛ում է։ Զին վազում է։ Խոտը շորացաւ։ Ոզնին կենդանի է։ Թթիթեռը միջատ է։ Պատկերը գեղեցիկ է։ Երկինքն ալպամած է։ Հիւքեռը կոզան։ Գետը ցամաքեց։ Մարդը զարմացաւ։ Գիւղացին հնծում է։

23. Արտազեղիք նոյնը յուկնակի թուռվ։ Մտորովեալների տակ դարձեալ պիծ քաշեցիք։

Օքինակ: — Կովերը որոշում են:

24. Արտագրեցք առանձին-առանձին յոտուկ, հասարակ և հաւաքական պայման անունները:

Յարութիւն: Երկաթ: Կամաք: Ջոկ: Մարզաքիտ: Եղան: Աստառ: Ոսկի: Մարմին: Հրաշեայ: Հեղինէ: Մատիտ: Հրանոյշ: Գոմլ: Զօրք: Հայկուհի: Արամ: Թուղթ: Եկեղեցի: Մուկոս: Կոր: Մասիս: Սար: Գետ: Աստղ:



29. ՔԱԹՔ ԶԱՅԻՆ ՄԱՐԹՈՒՇ բանական զար
Մի օր մէկ գառը, չգիտեմ ինչ էր,
Խելքին ինչ տեսակ քամի էր փչել,
Գցեց իւր վրայ մի գալիք մորթի,
Գնաց, խառնուեցաւ հետը իւր հօտի:

Բայց երբ շների աչքովն ընկաւ,
Ասին՝ անտառից ահա գալլ եկաւ,
Գոռում-գոչումով վրայ վագեցին,
Բերաններն առան ու գլոգեցեցին:

Լաւ էր, որ շուտով հովիւը տեսաւ,
Փալտ ու մահակով նուն տեղը հասաւ,
Ու խեղճ գառնուեկը կատղած շների
Սուր ատամներից հազիւ փրկուեցաւ:

ԴՐԱՄԱՐԱՅԵԼ Ամեր գոտուը հազիւ-հազիւ որ ովֆ —
ոմի իս ելինաք միջն Արիւնաթաթախ ու նուազնան ըմբու զրիք
ամե մազմ ըմբու թուզ ոտները քաշ տալով զար ու ըդր առան
շասաւ գոմը մի կերպով: յառավաշ և ընորմաք

30. Ա Գ Թ Ա հ

Ագւաւը տեսաւ, որ սիրամարդների շատ գեղեցիկ են, վետուրներն
այնպէս փայտոն, զանգզոն, որ կարծես թագաւորի ծիրանի լինին:



— Ինչու եմ ես այս ու ու յիմար ագւաւների շաբին ըն-
կել, — մատածեց նա. — արի, ես
էլ այդպիսի սիրուն վետուրնե-
րով զարգարուեմ. սիրամարդ-
ներն ինձ սիրավ կընդունեն
իրանց մէջ, իսկ անձունի տղ-
ուաւներն, ինձ նայելով, զար-
մացած, հայցած կըմնան:

Եւ նա սիրամարդի սիրուն վետուրներ ճարկելով զուգուեց-զար-
գարուեց ու զնաց, սիրամարդների հետ խառնուեցաւ: Բայց այստեղ
նրան շուտով ճանաշեցին. սիրամարդները վրայ թափուեցան, կտցա-
հարեցին, կեղծ վետուրների հետ խսկականներին էլ պոկեցին և իրանց
միջից զուրու արին:

Շնարդուած, վետուրներից զրկուած ազաւոր զնաց իւր աղջա-
կանների մօտ, բայց նրանիք էլ երես զարձրին և չընդունեցին նրան: կանների մօտ,

31. Փ Ի Չ

Հովկացին մի փիզ ուներ: Տէրը նրան շատ վատ էր կերակրում
և շարունակ զսր անել էր ապիս: Մի օր էլ փիզը բարկացաւ և իւր
տիրոջը ոտնատակ տուեց, սպանեց: Հովկացաւ կինը արտասունքն աշ-
քերին բերեց իւր պրացը, զցեց փփի ոտների տալ ու ասաց.

— Փիդ, դու սպանեցիլ հօրը, սրանց էլ սպանիր:

Փիզը նայեց մանուկներին, յետոյ ամենից մեծին կնճիթով վեր
առաւ, դրեց իւր պարանոցի վրայ և այնուհետեւ սկսեց նրան հնա-
զանգուել և աշխատել նրա համար:



32. Փիդ եհ ՔՈԹՈԹՈԹ

Մէկ փիդ առած ման կածէին

Փողոցներից անցընելով,

Յանկարծ քոթոթ մի կուռասէր

Վրայ վազեց խիստ հաչելով:

— Զայնդ կտրիր, դրացի եղբայր,

Ասաց գամբուզ մեր քոթոթին. —

«2ես տեսնում, որ ծաղը եղար

«Բոլոր շների դու առաջին:

«Դու ով ես և փիզը ով.

«Ահա քո հեքդ է բռնւում,

«Իսկ նա հանդարտ և անխուզ

«Հաչելուդ էլ ուշ չէ դնում»:

— Հա՛-հա՛, հա՛-հա՛, դու չիմացար,

Պատասխանեց մեր քոթոթը, —

«Ու իմ միտքը չհասկացար:

«Հեռուից կանչեմ, կոռուեմ հետը,

«Որ մեծ բանի մէջ երևամ,

«Ուրիշներին էլ ասել տամ.

— Տեսէք, քոթոթն ինչպէս քաջ է,

«Որ փղի դէմ էլ կըհաչէ»:

ԳՐԱԿԱՆ ԱՍՏՐՈԹԻՒՆՆԵՐ

25. Արտագրեցէք հետեւել նիւթակաների անունները:

Աղ: Բամնակ: Շաքար: Ֆնտակ: Սրինգ: Մեխակ: Վարդ: Փետուր: Ճիրան: Մարդ: Արօր: Երկիր: Կացին: Սանձ: Փայտ:

26. Արտագրեցէք հետեւել մտաւոք առարկաների անունները:

Հոգի: Հրեշտակ: Եռանդ: Քաջութին: Ազրուտ: Խմասութին: Ժուլութին: Կամք: Երջանկութին: Մէր: Ատելութին:

27. Արտագրեցէք և հարցերին համաձայն ստորոգեալներ աւելացրէք:


Ժիճեռնակը (ի՞նչ է անում) ծոլվում է: Գորտը (ի՞նչ է անում): Մշակը (ի՞նչ կանէ): Ազուաք (ի՞նչ է): Կոշկակարը (ի՞նչ արաւ): Հոնճը (ի՞նչ եղաւ): Ժուլը (ի՞նչպէս է): Մեղրը (ի՞նչպէս է):

33. ՈՉԽԱՐԵԵՐՆ ՈՒ ԳԱՅԼԵՐԸ

Մի անդամ զայլերն ասացին ոչխարներին:

— Մեղքերս ինչ թարցնենք — մենք ձեղ հետ շատ վատ ենք վարւում և անմեղ տեղը ձեր արինը թափում. դուք էլ, իհարկէ, մեզանից վախենում էք և խիստ ատում էք մեզ: Բայց գիտէք զրանում ով է մեղաւոր — ձեր չար շները. Նրանք միշտ աշխատում են մեզ ջնջել, կոտորել, էհ, մենք էլ մեր վրէմը ձեղանից ենք հանում: Եկէք, լսեցէք մեզ, այդ շներից թողէք, հեռացէք. մենք ձեղ միշտ կըպաշտպանենք:

Յիմար ոչխարները հաւատացին նրանց և ծածուկ հեռացան շներից: Դայլերն էլ հէնց այդ էին ուզում. նրանք վրայ թափուեցան, անպաշտպան ոչխարներին խեղղեցին ու կերտն:



34. ՊԱՌԱՀՆ ՈՒ ՔԱՅՆԻՔ

Քաղցած զայլը որսի էր ման զալիս: Գիւլի մօտի անցնելիս յանկարծ լսեց, որ մի խրճիթում երեխան լաց է լինում, իսկ պառաւ տառն ասում է նրան:

— Զայնդ կորիր, թէ չէ քեզ զայլին կը տամ:

Գայլը կանգ առաւ և ալիս չհուացաւ խրճիթի մօտից: Նա սպասում էր, որ պառաւը երեխային իրան տայ: Ապանեց, սպասեց և յանկարծ նրա ականջին հասաւ պառաւի ձայնը, որ այս անվան ասում էր.

— Մի լար, զաննեկս, ես քեզ զայլին չեմ տալ. նա զայ թէ չէ, իսկո՞ն կը սպանեմ:

«Ինչպէս երեւում է, այստեղ ինչ որ ասում են, նրա հակառակն են կատարում», — մտածեց զայլը և թողեց, հուացաւ զիւղից:

35. Ա Ր Ա Գ Ի Հ

Արագիլները կանգնած էին իրանց բնի վրայ, զլախները մէկ երկինք էին բարձրացնում, մէկ երկիր խոնարհում, երգում, կը լիլացնում:

— Այդ են բարե տալիս, — ասում է Մարփամը:

— 2է, ինձ, — հակառակում է Արտէնը:

— Երկուդ էլ են բարեւում, ամքող զիւղին էլ, — տաց տատը և նրանց վէճը վերջացրեց:

— Տես, տառի, ծաերն ինչպէս ուրախացել են, — ասաց Արտէնը: — Ինչպէս քաղցր ձայնով ծրվըլում են:

— Աւրտխացել են, անուշիկ, ուրախացել. չէք տեսնում, քանի հազար ծաեր արագիլի բնի ցախերի արանքումն են իրանց համար

բուն շինել: Ծտերը լաւ զիտեն, որ արագիլի ահից ոչ օձ, ոչ ուրուր, ոչ կատու և ոչ մի ուրիշ թշնամի չի կարող նրանց բնին մօտենալ, նրանց ձուերը խմել կամ ճտերն ուտել: Հենց զրահամարէ, որ արագիլների զալովը պատիկ ծտերն այնպէս ուրախանում են:

* * *

— Տատի, — հարցըրեց մի օր Մարփամը պառաւին: — մեր զիւղը արագիլներով լիքն է. այգքան կերակուր զրանիր մրտեղից են զտնում:

— Մեր զաշտերը, հովիս, լիքն են օձերով. ճահիճների զրտակներն իրանց կը սկսեցուավ զլուկա են տանում, արտերի մէջ անպիտան մըկները հազար տեղ ծակեր են բաց արեւ. եմէ արագիլը շինէր, ունիր ցորենի երես չէինք տեսնիլ:

— Բա օձն արագիլին չի կծում:

— Օտտ էլ ուղում է, շտո էլ հետը կռաւի է բռնում, ըայց միշտ յաղթւում է:

— Ի՞նչպէս:

— Արագիլը թաշելիս վիրեից տեսնում է օձին և իջնում, նրա զլուին կտցով խփում է: Օձը վշշացնում է, վրայ պրծնում, աշխատում է արագիլի բաց ոտք կծել: Արագիլն իւր թեկի ծայրն է օձի բերանին մօտեցնում ու անզագար նրա զլիսին կտցում: Կտցում է, կտցում, այնքան կը ակստալով խփում է, մինչև նրա զլուխը ցըւում է: Օձը երկար ու ձիգ փռուում է գաշտի վրայ: Յեսոյ արագիլն օձի մէջ տեսերկար ու ձիգ փռուում է և բերան բանը, բաժին-բաժին է անում, ձագերին ուտացնուում, ինքն էլ կտանագում:



Ք Բ Ա Խ Թ Վ Ե Ր Մ Ի Թ Ի Ւ Ն Ե Բ
28. Արտագրեցէք առանձին - առանձին նիւթական և մտաւոք առարկաների անոնները:

Միտք: Կարագ: Եղոնգ: Զանասիրութիւն: Բժշկութիւն: Ժաղկե: Հող: Զոր: Հըեշտակ: Եռանդ: Վէճ: Մանզադ: Արօր: Գութան: Գարոն: Ոյժ: Աշոն: Զութակ: Դոր: Վաստակ: Տակսոն: Ժիծադ: Հանգստութիւն: Հատիկ:

29. Արտագրեցէք «Ռշիարներն ու գայլերը» յօդուածը եղակի թուով:

30. Հեակեալ նախաղասութիւններից արտագրեցէք սառողիալները լը ացուցիչ բառերի հետ: Սառողիալի և լրացուցիչ բառի մէջ հարցեր գրեցէք:

Եղբայրս սպասում՝ է ընկերոջը: Մաթենիկիր ջուր թերեց եղբօրը: Որտորդը հրացանով արջին սպանեց: Աշակերտը սովորում՝ է դասը: Ուսուցիչը պատժեց աշակերտին: Գարբինը մնութեածով երկաթ է ծեծում: Հայրս ինձ խաղալիք զնեց:

Օրինակ:— Սպասում՝ է (ո՞մ) ընկերոջը: Բերեց (ի՞նչ) ջուր (ո՞մ) եղբօրը:

36. ՊԱՆԴՈՒԽՈՅ ՊԱՃԱՆՈՒԻ ԵՐԳԻՐ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թուչնակ,
Դէսի ուր, ինձ ասա,
Թուչում ես ալդպէս արագ:

Ախ, թոիր, ծիծեռնակ,
Ծնած տեղս — Աշտարակ,
Անդ շինիր քո բունը,
Հալրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեսոր
Հալր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէցօր:


Երբ տեսնես գու նըան,
Ինձնից շատ բարեւ արա,
Ասա, թող նստի լալ
Եւր անբազդ որդու վրայ:

Գու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէլ ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով,
Կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը
Մութ է շըջում արեգը,
Դիշերը թաց աչքիս
Քունը մօտ չե դալիս:

Շուտով սառ հողի տակ
Կըպառիեմ ախտեղ մենակ,
Թաղնելով հօրս սրաւում
Միշտ ցաւալի լիշտառի:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թոիր արագ
Դէսի Հալր երկիր,
Ծնած տեղս — Աշտարակ:



37. Գ Ա Յ Լ Բ Ե Ի Ց Ո Ւ Ն Բ

Նիհար, քաղցած գայլը դիւղի մօտով անցնելիս՝ պատահեց մի կեր շան և հարցրեց նրան:

—Այ շոն, ասա, խնդրեմ, զուք ձեր կերակուրը մրտեղից էք ճարում:

—Մարդիկ են տալիս, — պատասխանեց շունը:

—Երի զուք շատ դժուար ծառայութիւն էք անում նրանց:

—Ոչ, — պատասխանեց շունը. — միր զուծը դժուար չէ: Մենք միայն գիշերները նրանց տունն ենք պահպանում:

— Ուրեմն միայն զրտ համար են ձեզ կերակուր, — ասաց գայլը:
— 2ի լինիլ, որ ես էլ զամ մարդկանց մօտ ծառայելու. թէ չէ մենք մեծ դժուարութեամբ ենք կերակուր ձեռք բերում:

— Ինչու չէ, զնանիք, — ասաց շունը. — իմ տէրը քեզ էլ կըկերակիք:

Գայլն ուրախ-ուրախ վագից շան յետից: Բայց զռան մօտ նա նկատեց, որ շան պարանոցի մազերը պոկուած են:

— Այդ լինից է, — հարցրեց նա:

— Եհ, այնպէս, — պատասխանեց շունը:

— Ի՞նչպէս թէ այնպէս:

— Եյնպէս, էլի, շղթայից է: Գու շգիտիս, որ ցերեկներն ինձ շղթայով կապում են:

— Կապում են, — ասաց գայլն ու կանգ առաւ: — Դէհ, ուրեմն մնաս բարով: Աւելի լաւ է ես միշտ նիհար, բայց ազատ լինիմ, քան թէ փորիս համար ուրիշների գերին դառնամ:

38. Հ Թ Ի Ս Ե Ա Հ Ա Զ

— Հալրիկ, ինչու մեր Բօղարը
Միշտ հաջում է լուսնի վրան.
Միթէ պայծառ լուսնեակը
Մէկ վնաս է տալիս նրան:
— Ոչ, որդեակ իմ, ոչ թէ վնաս,
Ալ լոյս, միայն լոյս է տալիս.
Իսկ շանս, իբրև գալիք ցեղի,
Ասոս գիշերը գիւր չի գալիս:
Բայց լուսինը խօս չգիտէ,
Որ իւր վրայ հաջողներ կան.
Նա լուս ու մուհը, բագ բոլորոն,
Նարունակում է իւր ճամպան:
Մենք էլ, որդեակ, լուսնի նման
Պէտք է լոյս տանք մութ տշխարհին
Եւ համարենք, թէ չենք լուսում
Մեզ վրայ զուր հաջողներին:

39. Գ Ա Յ Հ Ե Ի Ս Կ Ի Ւ Թ


Սկիւր, ծառի վրայ թռչկոտելիս, յանկարծ վայր ընկաւ մի
գայլի վրայ, որ քնած էր ծառի տակին:

Գայլը միր թռաւ, բանեց նրան
և ուզում էր ուտել, Սկիւրն ոկսեց
աղաչել.

— Թո՞ղ ինձ:

— Լաւ, — տսաց գայլը, — ես քեզ
կը թողինեմ, եթէ միայն ինձ տսես
թէ ողատնառն ինչ է, որ ես միշտ տիսուր-արտառ եմ, իսկ զուր,
սկիւռներդ, այզպէս ուրախ էք և շարունակ թռչկոտում ու խոզում
էք ծառերի վրայ:

— Առաջ թո՞ղ ինձ, բարձրանամ ծառը, — տսաց ոկիւրը. — այն-



անզից կրտամ քո սպատասխանիք. թէ չէ ես վախենում եմ քեզանից:
Գայլը բաց թողեց: Սկիւրը ծառը բարձրացաւ և այնտեղից ասաց.

— Քո ամրութիւնը նրանից է, որ դու չար ես: Չարերն ուրա-
խութիւնն չունին: Իսկ մենք ուրախ ենք նրան համար, որ բարի ենք
և ոչ ոքի վատութիւնն չենք անում:

Գ Ր Ա Կ Ո Ր Վ Ճ Ր Ժ Ո Ւ Խ Ո Ւ Ն Ե Բ

31. Հեահեալ նախապատութիւնների մէջ հարցերին համապատասխան
լրացուցիչ բառեր աւելացրէք:

Գիւղացին վարում է (ի՞նչը)..... (ի՞նչո՞վ)..... կինն ամելից
(ի՞նչը)..... (ի՞նչո՞վ)..... չօրեղբայրս (ո՞մը)..... ընծայեց (ի՞նչ)
.....: Արտաշէսը զրօնում է (ո՞ւմ ճետ).....: Շուշանիկը նամակ
ստացաւ (ո՞մնից).....: Առաջձագործը սեղանը շինում է (ի՞նչից)
.....: Շոնը հաշում է (ո՞ւմ վրայ).....: Մենք խօսում ենք
(ո՞ւմ մասին).....:

32. Արտազրեցէք և ուր որ հարկաւոր է ենթակայ, ստորոգրեալ և
լրացուցիչ բառեր աւելացրէք:

Հաւը է ածում: քշում է սայլը: Տառը ներիած:
..... որյն է շինում: ներկում է տունը: Հացիուխը է
թխում: ժամացոյց է շինում: Շունը տունը: Աշ-
կերտը զրում է:

33. Արտազրեցէք «Գ ա յ լ լ և ս կ ի ւ ռ լ» յօդուածը յոգնակի թուով:

40. ՊԱՀՊԱՆԵՑԻՔ ԶԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Փրանսիայում, զաշտերի և անտառների մէջ, սիւներ են տնկած
և այդ սիւների վրայ կացրած են տախտակներ, որանդ գրուած է.

«Ոգնին կերակրում է միներով, խխունջներով և որդերով, Զսպա-
ներ սպնիներին»:

«Խոլուրդը միշտ զանազան վհասակար միջատների որդեր ու թրթուրներավ է կերակրուում։ Նրա ստամպառում երբէք բուռեղին կերակուր չէ զանուած։ Զսպանէք խլարգներին»։

«Թրթուրները մեծ վիաս են հասցնուում ժողովրդին։ Թուչունները շափազանց մեծ քանակութեամբ թրթուրներ են ոչնչացնում։ Մանուկներ, ձուեր և ձագեր չհանիք թուչունների բներից։ Զաւերիք նրանց բները»։

41. ՄԵՂՈՒԽ ԵՒ ԱՐՁՐ

Սնառակի խորքում մեղուն իւր համար
Ծառի փչակում, գետնից ոչ բարձր,
Մի բուն էր շինել,
Մէջը ձագ հանել
Եւ անուշ մեղրով
Բճիճը լցրել։
Զգիտեմ ինչպէս, մի օր արջուկը
Առաւ ալդ մեղրի անուշիկ հոտը.
Մըթմըթաց, փնթփնթաց,
Ծառն ի վեր կանդնեց
Եւ երկու թաթեր
Բնի մէջ կոխեց։
Մեղուն տըգարզաց, տըգացին ձագեր,
Բայց արջը չքաշեց իւր բրդոտ թաթեր,
Քանդեց ողջ բունը,
Զարդեց խեղճ ձագեր,
Հանեց բճիճը,
Լափեց անհամբեր։
Մեղուն՝ երբ տեսաւ իրան ձագուկներ
Ալս անգուժ արջի սոտի տակ ձզմու ած՝
Գըուդըուաց տիտուր,
Խալիթեց նրա աչք
Եւ ինքն էլ անշունչ
Ընկաւ ձառի տակ։

42. ՄԻՔԱՅԵՆԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹԻԹԻՒՆ

Ամառը կաղամբի տերենների վրայ գուք տեսած կըլինիք կանա-
չապոն որդունկներ, որոնք թը լու-
թուր են կոշտում։ Այդ թրթուր-
ները կերակրում են կաղամբի տե-
րեններավ, նրանք շատ ազան են և
որից բան ու զործ չունին, բացի
ուտելն ու մեծանալը։




Երբ թրթուրը մեծանում է, պա-
տենաւորում է, այդ ժամանակ նա
ոչ ուտում է, ոչ խմում, այլ ան-
շարժ բնկած մնում է իւր տեղը։

Միքանի օրից յեայ այդ պատեանի միջից գուրս է թուչում
թիթեռը։ Սա ձուեր է ածում, իսկ այդ ձուաններից գուրս են զա-
լիս աղան թրթուրներ։ Աշնանը թիթեռը սատակում է։

Այսպէս կերպարանափոխուում են բոլոր թիթեռները, բգեզները,
ճանձները, մեղունները և պիծակները։ Միջատը ձու է ածում, ձուաննե-
րից գուրս են զալիս որդեր կամ թրթուրներ, որդերը պատենաւոր-
ուում են, իսկ պատեաններից գուրս է սողում իսկական միջատը։

43. ՄԵՂՈՒԽ ԵՒ ԱՐԺԻԻՐ



— Ճառ ողորմելի ես դու, —
տաց մի օր հպարտ արծիւը
համեստ մեղուին։ — Հնայելով որ
ամբողջ կեանքումդ տանջուում
ես, բայց և այնպէս քեզ ոչ ոք
չի ճանաշում, որովհետեւ դուք
մի փաքրիկ մեղրախորիսխի
վրայ հազար հոգի էք աշխա-
տում։ Ո՞վ կարսդ է որոշել, թէ
որ մտան է քո շինածը։

— Ինչիս է հարկաւոր այլ, — համեստութեամբ պատասխանեց մեղուն. — Ի՞նչ օգուտ, եթէ ճանաչեն ինձ, Բաւական է, որ ճանաշում ու սիրում են մեր մեղը և ես ինձ բազաւոր եմ դպում, որ մեղախորիսի մէջ մի կաթիլ էլ իմ մեղրից կայ:

— Հասկա մէկ նայիր ինձ, — ասաց արծիւր. — Իչեց որ ես երեսում եմ երկնակամարի երեսին, խոկոյն բոլորը նկատում ու ճանաչում են ինձ. գաղանիերն ու թռչունները աշք չեն հեռացնում ինձանից. Տովիւների քունն անզամ աշքերից փախչում է. Ահա այդպէս բոլորը թէ՛ մեծ, թէ փոքր լաւ ճանաչում են ինձ:

— Այս, ճանաչում են, որովհետեւ վախենում են քեզանից, — ասաց մեղուն:

ԳՐԵՒԹԻ ՎԵՐՓՈՒԹԻՒՆՆԵՐ

34. Արտագրեցէք հետեւալ նախաղասութիւնները և լրացոցից բառերի առկ գիծ քաշեցէք:

Ոզնին կերակրում է մկներով, խխոնչներով և որդերով: Խլուրդն ոտոսմ է որդեր և թթուրդներ: Թթուրդները վնաս են հասցնում ժողովրդին: Թռչունները թթուրդներին ոչնչացնում են:

35. Հետեւալ գայական անունների մաս որպիսութիւն ցոյց տառապ բառեր (ածական անուններ) աւելացրէք:

Բարձր (ի՞նչպիսի) տուն: Խելօք (ի՞նչպիսի) երեխայ: (ի՞նչպիսի) թռչուն: (ի՞նչպիսի) աշակերտ: (ի՞նչպիսի) մեղու: (ի՞նչպիսի) վարդ: (ի՞նչպիսի) զիշեր: (ի՞նչպիսի) զիրք: (ի՞նչպիսի) ժամացոյց: (ի՞նչպիսի) շոն:

36. Արտագրեցէք հետեւալ նախաղասութիւնները և որոշիչ (յանկացոցից) բառերի առկ գիծ քաշեցէք:

Պայծառ արեւը տաքացնում է երկիրը: Մենք մի հաստարիմ շուն ոնինք: Կոյր աղքատը ողորմութիւն է խնդրում: Փոքրիկ երեխան լայիս է: Ուսուցիւը պատժում է չար աշակերտին: Ես մի զեղեցիկ պատկերազարդ զիրք գնեցի: Չին ընտանի խոտակեր կենդանի է: Մանուշակը զեղեցին, հոտաէտ ծաղիկ է: Աղամանուը թանկագին քար է:

44. ՄԱՐԴՆ ՈՒ ՇԵՐԱՄՄՌ

Ջերամը մետարս էր շինում և գայնպայն կալոնները կախուսում կաղնու թարմ ճգներից կապած խուրձի վրայ, խոկ սարդը, տան մի անկիւնում քաշուած, իւր ցանցին էր հիւսում և ծիծագում շերամի վրայ:


— Ջերամ հորայր, — ասում էր նա, — զու շատ գանդաղ ես տանում քո զործը և շինուած էլ մի բանի նման չէ. խոկ ես, նայիր, տես, ինչ զեղեցիկ բան եմ շինել և տես, ինչքան երկար են իմ թելերը:

Ջերամը պատասխանեց:

— Մարդ հորայր, զու զիտես, ինչ է նշանակում բարութիւն:

— Ոչ, չպիտիմ:

— Այդ նրանից է, որ զու չար ես, քո զործն էլ չարութիւնի զործ է, Գու քո երկար թելերով մի թակարդ ես ցանցում, որ անմիտ ճանձերին սրսատ ու ծծես նրանց արխինք, խոկ իմ զործը բալութին ուրիշ բան է, քո բնութիւնից և խելքից վեր բան է:



45. ՄԱՐԴՐ ԵՒ ԹՁԲ

(Հ. Է. Բ. Ա. Բ.)

I.

Մի ձիաւոր երկար նիղակը ձեռքին կամաց-կամաց առաջ էր վեռում զաշտի միջավ: Ճանապարհից ոչ հեռու նա նկատեց մի խորյիկ, այնանեկ թէկ կրակ տրդէն չկար, բայց տաք ածուխների վրայ կծկւած թլցում էր մի տհակին օձ: Օձը տեսաւ մարդուն և աղաչից:

— Մարդ Սատուծոյ, օղինիր, ազատիր ինձ մահից:

Մարդը խղճաց օձին և իւր երկար նիղակը մեկնեց գէպի խորյիկը, օձը նրա վրայով վեր բարձրացաւ թէ չէ, փաթաթուեց մարդու պարագաները և ոկտիկ սաստիկ սեղմել:

— Ի՞նչ ես անում, — հաղիւ շնչաց մարդը:

— Միթէ չես զգում, թէ ինչ եմ անում, — պատասխանեց օձը. — Ես կամենում եմ քեզ խեղպել:

— Ի՞նչ, ողորմած Սոտուած: Զէ որ ես քեզ մահից փրկեցի:

— Ճիշտ է, բայց աշխարհումն միշտ լաւութեան դէմ վատա-թիւն են զործում, — ես էլ այդպէս պէտք է անեմ:

— Զէ, օձ, — վրայ բերեց մարդը. — այդ ճշմարիտ չէ. բոլորն այդ-պէս չեն, միայն դռ ես այդպիսի անարդար բան բանում:

— Զէ, միայն ես չեմ, բոլորն էլ այդպէս են, — Փշշաց օձը և աւելի պինդ փաթթաթուեց նրա պարանոցով:

— Աղաշում եմ, բաց թող կոկորդս, — խնդրեց մարդը. — լսիր, թէ ինչ եմ ասում:

Օձը մի քիչ թողլ թողեց:

— Երեք հոգու հարցնենք, եթէ ասածդ ճշմարիտ է, այն ժա-մանակ ինչ ուզում ես, արա, — ասաց մարդը:

— Դէհ, լաւ, տեսնենք, — համաձայնուեց օձը:

II.

Առաջ զնացին: Օձն այնպէս պինդ էր փաթթաթուել մարդու պա-րանոցով, որ խեղճը դժուարութեամբ էր շունչ քաշում: Մօտեցան մի տառուակի և կանգ առան:

— Լսիր, այ մաքուր առուակ, — ասաց մարդը. — Ես կրակից պղատեցի այս օձին, իսկ սա՝ փոխանակ չնորհակալ լինելու կատե-նում է ինձ խեղպել: Ասում է, թէ աշխարհիս մէջ միշտ լաւութեան դէմ վատութիւն են անում: Ճշմարիտ է:

— Ճշմարիտ է, — պատասխանեց առուակը. — այ, տես, որքան վճիտ և մաքուր է իմ ջուրը: Գալիս են ինձ մօտ մարդիկ իրանց ձի-երով, ուզտերավ և ես նրանց բալորին թարմ, մաքուր ջուր եմ առալիս: Եթէ ես չլինիմ, նրանք ծարաւից կը մեռնեն այս ամայի զաշտում: Բայց զիտեն նրանք ինչպէս են զուրս զալիս իմ լաւութեան տակից: Հեռանալիս ամեն տեսակ ազր ու կեղասվջուրս կեղաստում, փշտցնում են:

Եյս որ լսեց օձը, սկսեց տեղի պինդ սեղմել մարդու կոկորդը:

Առաջ զնացին:

III.

Ահա նրանք հասան մի բարձր ծառի և կանգ առան: Մարդը պատմեց նրան, թէ գործն ինչումն է, ծառն ասաց.

— Ճշմարիտ է ասում օձը: Եւ ահա, թէ ինչու: Դու ինքով էլ լաւ դիտես, որ այս զաշտում ճանապարհութիւնները, բայց իմ սասւերից, ուրիշ տեղ չունին հանգստանալու: Բայց նրանք հանգստանալուց և իմ պատվինները վայելելուց յետոյ՝ տերեններս պօկտում, ճնիկը կոտ-րատում, կեզես քերթում են և իրանց համար կրակ անում: Մի օր ինձ էլ, միւս քոյրերիս նման, պէտք է արմատիցս կտրեն, զետենին տապալեն: Ահա այս է նրանց փարմունքը իմ լաւութեան դէմ:

Օձն աւելի պինդ սեղմեց մարդու կոկորդը: Խեղճն այլիս ոչ կա-րող էր խօսել, ոչ չունչ քաշել, այլ միայն խըսիլուացնում էր: Յան-կարծ նա նկատեց, որ հեռուից մի գալլ է վազում: Մարդը ձեռքով նշան տրաւ օձին: Օձը քիչ բաց թողեց նրա կոկորդը:

— Սպասիր, զայլ, — կանչեց մարդը. — քեզ բան ունիմ ասելու:

— Լաւ, ասա, միայն ինձ շատ մի մօտենալ, — ասաց վախկոտ զայլը և կանգ առաւ:

IV.

Մարդն ու օձը քիչ մօտեցան զայլին և ոլատմեցին բոլորը:

— Ուրեմն գու օձին կրակից ակատել ես, — հարցրեց զայլը մար-դուն: — Դա մի քիչ դժուար հաւատալու բան է:

Մարդն սկսեց մէկ-մէկ պատմել, թէ ինչպէս էր եղել:

— Ո՛չ, ոչ, — ընդհատեց նրան զայլը. — պատմելին տեղարդ է, տեղի լաւ է՝ ցոյց տուր, թէ ինչպէս արիր այդ:


Մարդը նիկակը մեկնեց զէսի դեսին և օձը նրա վրայով ցած սողաց:

— Դէհ, այժմ ինչ կատաս, — հարցրեց նա զայլին:

— Թշնամին ունեներիդ տակ է և գու զեռ հարցնում ես, թէ, ինչ պէտք է անես: Սպահնիր նրան նիկակովիք, — ասաց զայլը մարդուն:

— Ո՛չ, — պատասխանեց մարդը. — միայն զագաներն են այդպէս փարտում, իսկ մեղ Սոտուած պատաւիրում է սիրել միր թշնամիներին

և ներիլ նրանց: Մնաս բարե, օձ, ովզ կաց և միտպ ովահիր այս: —
Ասաց մարդը և փախաւ, օձի ձեռքից ազատաւեց:



46. ՊԱՐԾՔՎԵԴ

Պարտէղները շինում են աների մօտ և շրջապատում ցանելապատով կամ ճաղերով: Պարտէղներում տնկում են պատղառու և հասարակ ծառեր ու թփեր, որոնք չառ անգամ գեղեցիկ, ստուերախիտ ծառուղիներ են կազմում: Ծառերի մէջ մարդիկ ցանում են զանազան բանջարեղներ և շինում գեղեցիկ ծաղկաժմբեր, որոնք ծաղիկներ են արիկում — մեխակ, յափրուկ, կակաչ, շուշան և այլն:

Պարտէղը մշակում է նրա տէրը կամ պարտիզանիր, հողը պարտացնում են ապրով, իսկ չոր եղանակին ջրում են: Պարտէղներին մնաս են տալիս թրթուրները, որդերը, թռչունները և ընտանի կենդանիները:

47. ԲԱՌԾԱՆՉԻ

Ամառն է: Կարծես կրակ է բարձրանում
Գետնի երեսից, ալրում, տապակում,
Ոչ շունն է հաշում, ոչ ճիճին երգում,
Վորտն էլ է լոել, էլ չի կըսկըսում:

Ամեքն էլ փախել, հոգ տեղ են գտել,
Երանց բնելում լուսել, պատանձուել.
Միայն մի հատիկ մարդ է երեսում
Խորընկած գաշտում, առուի եղերքում:

Վանդնած է մարդը արեկ տակին,
Ոտն ու ծունկը բաց, բահը գրած աւսին.
Մի շապիկ միայն ունի նա հազին
Եւ մի սպիտակ թասակ կալ դլխին:

— Բայց ինչ մարդ է նաև և ինչ է շինում,
Սրեկ տակին ինչու է ալրում:
— Նա բռստանչը է, բռստան է ջրում,
Սեխն ու ձմերուկը նաև է հասցնում:

48. ՊԱՐԾԻԶՊԱՆՆ ՈՒ ԻԻՐ ԱՐԹԻՔՔ

Մի ծերունի պարախպան շաբանակ խրատում էր իւր սրբացը,
որ աշխատասէր լինին, բայց սրպիքն ականչ չէին զնում նրան: Երբ
ծերունին զգաց, որ մահը մօտ է, կանչեց սրբացն ու ասաց նրանց.

— Սիրելի զաւակներս, իմ ունեցած-չունեցած այս տունն ու
պարտէղն է: Ուրիշ բան չունիմ: Բայց պարտիզում
զանձ զայ թաղած: Փորեցէք և անշուշտ կըպանէք:

Ծերունու մահից յեռոյ սրպիքն սկսեցին փորփրել պարտէղը:
Փորեցին, փորեցին, աշխիշ չգտան: Բայց հետհետ տարին պարտիզի
ծառերն առատ պառուղ տուին: Այդ ժամանակ միայն նրանիք հասկա-
ցան, թէ ինչ զանձի մասին էր ասում հայրը, և այնուհետեւ սկսեցին
շանասիրովթեամբ աշխատել ու շուտով մեծ հարստութեան տէր զարձան:

ԳՐԱԿԱՐԱՎԱՐ ՎԵՐՓՈԽԻԹԻԿԱՆԵՐ

37. Հետհետ նախադասութիւնների մէջ աւելացրէք ու ոչիչ (յատ-
կացուցիչ) բաներ և նրանց տակ զիմ քաշեցէք:

Հպարտ արծիւը խօսեց ու մեսատ մելոդի նետ: սարդը
ցանց է նիստմ: աղուէսը նաև փախցրեց: Գայլը կեն-
դանի է: նապաստակը խոտ է արածում: Կոմն կեն-
դանի է: Աստուած պատժում՝ է մարդկանց:

38. Արտազրեցէք և պատկանելութիւն ցոյց տուող որոշիչ (յատկացուցիչ) բառերի տակ զիծ քաշեցէք:

Իժ (ո՞ւմ) հայրը իր (ո՞ւմ) ծին ծախեց: Վարդի (ի՞նչի) հոտն ախոքժելի է: Իշի (ո՞ւմ) ականջները երկար են: Նըս (ո՞ւմ) եղբայրը մեր (ո՞ւմ) հարեւանի (ո՞ւմ) տանն է: Արծիւը իր (ո՞ւմ) բոնը հիամմէ բարձր ժայռերի (ի՞նչի^o) կատարին: Մեր (ո՞ւմ) տան (ի՞նչի^o) կտուրը հողով է ծածկուած:

39. Գրեցէք միքանի նախազառթիւն լրացուցիչ և որոշիչ (յատկացուցիչ) բառերով:

49. Ժ Ա Թ Ի Կ

Աշ նորատունկ իմ ծառիկ,
Եփեր արա գեղեցիկ,
Սրմատ ձգէ դու հոգում,
Որ չշարժէ քեզ մըրիկ:

Ես ամեն օր քեզ համար
Զուր կըքերեմ սափորով
Եւ քո տակը կըփորեմ,
Որ զօրանաս դու շուտով:

Ծաղիկ, տերեւ ու պտուղ
Թոնդ զարդարեն քո ճիւղեր,
Նըսնց վրայ թող երդեն
Անոյշ ձայնով սոխակներ:

Հաստացրաւ քո բունը.
Այն ժամանակ փոթորիկ
Թոնդ մոնչէ, որոտալ,—
Զի վնասիւ քեզ, ծառիկ:

50. ԺԱԹԵՐԻ ՎԵՐԲ

Դառերը վիճեցին միմեանց հետ, թէ իրանցից նրի է լուր կաղինի ասաց.

— Ես բոլոր ծառերի թափաւորն եմ, իմ արմատը շատ խորի է թափաւած գետնի մէջ, բունս հաստ է, զազաթո մինչի երկինքին է հասնում. իմ տերեները շատ զեղեցիկ են, իսկ ճղնիսո կարծիս երկաթից ձուլած լինին: Ես փոթորիկների տոտչ չեմ խոնարհուած, մրրիկի տառչ չեմ թերւուած:

Խնձորենին լսեց կազիու խօսքերն ու ասաց.

— Ճատ էլ մի պարծենար, սիրելի կարինի, որ դու այդքան մեծ ես հաստ, դու այս տառ, թէ քո պտուղներն նվ է զործածում:

բացի խողերից. իսկ իմ կարմիր խնձորն արքայական սեղանների վրայ անգամ տեղ ունի:

Լուռմ է մայրին, շարժում է իւր վշոտ վլուխը և ասում.

— Սպասեցէք մի քիչ, շուտով կրգայ ձմեռը և զուր երկուսը էլ կրմերկանաք, իսկ ինձ վրայ այնուամենայնիւ կրմնան իմ կանաչ վշերը: Առանց ինձ ցուրտ երկրներում ասլել անկարելի է. ինձուով մարզիկ լինակարաններ են շինում և իրանց վառարանները վառում:

51. ԺԱԹԵՐՆ ՈՒ ԿԱՅԻՆՔ

Ժառերն անտառում երբ շատ նեղացան
Կացնի ձեռիցը և էլ չիմացան,

Ինչ անեն, որ իրանց գլուխը պահեն,

Խորհուրդ արին, որ մի հնար գտնեն:

— Կացինն ով է, որ մեզ կարողանայ

«Զօռ անել, լաղթել. ինչ մեծ բան է նա.

Այսպէս ձայն տուեց ժառերից մէկը. —

«Մենք որ կոթ չտանք, կացինն ինչ է, որ

«Յանդգնի անել մեզ կտոր-կտոր:

* * *

«Թող իմացողն ինքն իմանալ,

«Եւ իզուր տեղը կացնից չնեղանալ.

«Ով որ կոթ կըտակ պազարատէ կացնին,

«Թող հոգուցն ասէ առաջ իւր անձին»:

52. ԵՐԿՐՈՒ ԽԵԶՈՐԵՆՔ

Մի պարտիզան երկու որդի ունէր: Մայիս ամսին հայրը նրանց մի-մի խնձորենի ընծայեց: Երկու ծառերն էլ միաշափ և միատեսակ էին, միայն իրարից մի քիչ հեռու էին անկած պարտիզում:

Մեծ որդին, որ մի աշխատանէր պատանի էր, սաստիկ արախացաւ հօր պարզելի վրայ և իսկոյն սկսեց ամեն աշխատութիւն ու

ինսամք գործ զնել, որ ծառը լաւ աճի, զօրանայ. Նա ծառի վրայից թրժուրները հեռացրեց, չորս կտոմի հոգը լաւ փափկացրեց, որ օդն ու խոնաւութիւնը մինչև նրա արմատները հասնեն:

Իսկ կրտսեր սրբին, որբ ստատիկ ծովլ էր և անուշագիր, բոլորին մոռացաւ իւր խնձորենին և սեպանմբեր ամսին միայն, երբ բոլորն արգին սկսել էին խնձորենիր ժողովել, նրա միան ընկաւ ծառը: Բայց որբան գալմացաւ նա, երբ ծառին մօտենալով, աչ մի խնձոր չգտաւ նրա վրայ. պտուղների մի մասը զեռ խակ ժամանակ թիրթուղներն էին կերել, իսկ միւս մասը քամին էր թափել, փշացրել. այնինչ եղրօր խնձորենու վրայ կարմիր, գեղեցիկ պտուղները հեռացից տեղամ երեւմ էին: Արտասունին աշքերին մանուկը վաղից հօր մօտ և գանդատաւեց, թէ ինչն էր նա իրան վատ և անապատ ծառ լինձայիլ, իսկ եղրօրը — լաւը և պտղատուն:

— Զեկ երկսիգ էլ ես միննայն տեսակ խնձորենի էի նույիրել, — պատասխանեց հայրը. — բայց քո եղրայրը աչ մի աշխատութիւն ու խնամք շինայից իւր ծառի համար, այնինչ զու ծուլացար և ամենին աշագրութիւն չպարձրիր քոնի վրայ:



ԳՐԱԿԱՐԱԿԱՐԱ ՎՐԱ ԹԻՒՆԵՐ

40. Արտագրեցիք և աեղ ցոյց տուող պտրագալ կան բառերի տակ գիծ քաշեցիք:

Աշակերտը զնում է (ո՞ւր) ուսումնաբան: Փարտիզում (ո՞ւրեղ) գեղեցիկ ծառեր կան: Աստղերը փայլում են (ո՞ւրեղ)

երկնքում: Եղբայրս եկաւ (ո՞ւրեղից) Տփխիսից: Հայրս զնաց (ո՞ւր) եկեղեցի: Աշակերտները վերադառնում են (ո՞ւրեղից) զպրոցից: Զիները լողում են (ո՞ւրեղ) ջրում: Շոգենաւը լողում է (ո՞ւրեղ) ծովի երեսին:

41. Արտագրեցիք և հարցերին համապատասխան աեղ ցոյց տուող պարագական բառեր տեկտացրեք:

Գիտացիները աշխատում են (ո՞ւրեղ).... Մարդիկ ընակում են (ո՞ւրեղ).... Մեղուները թռչում են (ո՞ւրեղից).... (ո՞ւր).... Կարմիր արեւը բարձրացաւ (ո՞ւր)....: (ո՞ւրեղ) շատ թռչունները են բնակում: (ո՞ւրեղ) մարդիկ աղօթււմ են Աստծոն:

42. Հարցերին նայելով լրացրեք հետեւալ համառոտ նախադասութիւնները:

Ես գրեցի: — Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՞մ: Ո՞ւրեղ: Քոյքը զնեց: — Ո՞մ քոյքը: Ի՞նչ: Ի՞նչպիսի: Ո՞մ համար: Հայրը զնաց: — Ո՞մ հայրը: Ո՞մ հետ: Ո՞ւրեղից: Ո՞ւր: Ուսուցիչը հարցնում է: — Ո՞մ ուսուցիչը: Ի՞նչ: Ո՞մ: Ո՞ւրեղ: Մանուկը խսդում է: — Ո՞ւրեղ: Ո՞մ հետ: Օքինակ: — Դպրոցում ես երկար նամակ գրեցի բռնջ:

53. ԽՈՂՋՅ ԿԱՂԵԿ ԺԱՄԻ ՃԱԿ

Խողը՝ հաստարմատ կաղնու տակ կանգնած,
Կերաւ կաղինը, գլուխը կախած.
Մինչեւ կոկորդը, կերաւ, լցուեցաւ,
Ապա կաղնու տակ հանգիստ քնեցաւ:

Յետու զարթնելով՝ բացաւ աչքերը
Եւ ըստի կնճիթով սկսաւ փորել
Այն կաղնի ծառի հասաւ արմատները,
Որից ալդ ժամին սնունդ էր տոել:

— Զէ ոք ալդ բանը ծառին վնաս է, —
Նրան վերեից աղոտւը կասէ,

«Եթէ ալդախոսի տրմատը բանաս,
«Նո կըչորանալ, ալդ բաւ իմանաս»:
— «Իսկ ինձ ինչ վնաս, թէ կըչորանալ,—
Յածից տոռւմ է նրան խոզն ազահ.
«Ես գրա մտոին բնաւ չեմ ցաւում,
«Կաղին է իմս, նո է գիրացնում»:
Ծառը բարձրիցը՝ «ապերախտ,— ասաց,
«Ուստի են թափւում կաղինները ցած.
«Գէթ կարենալիք մի վերև նայել
«Եւ կոյր աչքովդ ալդ բանն ստուգել»:

54. ԱՇԽԱՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մի անգամ Սպրիան կայսրը զրօննելիս պատահեց մի զառամեալ ծերունու, որ մի մատաղ թղենի էր տնկում, և ասաց նրան.

— Եթէ զու երիտասարդութիւնդ անվործ անցկացրած չվիճէիր,
այժմ ստիպուած չէիր լինի այդ զառամեալ հասակումդ աշխատել:

— Մանկութիւնիցս սկսած՝ ևս ծոյլ չեմ եղել, տէր-թափաւոր,—
պատասխանեց ծերունին, — և ահա մինչեւ ծերութիւնս էլ աշխատում եմ, ինչքան որ կարող եմ: Աստուած սիրում է աշխատանքը:

